ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐՈՏՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ (ՋՐԵԼԱՏԵՂԻ, ԱՐՈՏ ՏԱՆՈՂ ԴԱՇՏԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ) ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆԳՆՄԱՆՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-19/111»

«26» **օգոստոսի** 2019թ.

ք. Տաշիր

ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան»-ը, ի դեմս համայնքի ղեկավար Է. Արշակյանի, որը գործում է «**ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան»**-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու 1), **«Ռազմավարական զարգացման գործակալությունե ՀԿ, ի դեմս նախագահ՝ Մ.Այվազյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու 2)** մի կողմից, և «Տրանս Շին ՍՊԸ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Բաղդասարյանի, որը գործում է «Տրանս Շին ՍՊԸ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **համայնքային արոտների հասանելիության մեծացման նպատակով անհրաժեշտ ենթակառուցվածքների (ջրելատեղի, արոտ տանող դաշտամիջյան ճանապարհ, բաց կամ ծածկով մակատեղ, հովվի կացարան) կառուցապատման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուները պարտավորվում են ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել մրցույթում առաջարկված նախահաշվային գնի (առանց ԱԱՀ) 30/70 համաֆինանսավորմամբ (30% Պատվիրատու 1 և 70 % Պատվիրատու 2՝ (վճարումը՝ համաձայն 5.1 կետի):

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30 հոկտեմբերի 2019թ.:

1.4 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների արդյունքի համար նախատեսվում է երաշխիքային ժամկետ, որը սահմանվում է աշխատանքները ողջ ծավալով ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված մեկ տարի ժամկետով (365 օր):

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

2.3 Կապալառուն կարող է բացառիկ դեպքերում Պատվիրատուների համաձայնությամբ ենթակապալառու վարձել, սակայն չի կարող հանձնել սույն պայմանագրի կատարումը այլ կազմակերպությանը առանց Պատվիրատուների գրավոր համաձայնության: Ենթակապալները հիմք չեն հանդիսանում Կապալառուի պարտավորությունների փոփոխման համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուները իրավունք ունեն՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և

պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուների կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուներն պարտավոր են՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուներից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուների կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուներից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուների տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (ջրամատակարարման և այլն) անհատական փորձարկում, մասնակցել փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուներին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուներին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուների կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում [illegible] սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի 1-ի, Պատվիրատուի 2-ի և Կապալառուի միջև եռակողմ հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուներին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուների և Կապալառուի միջև եռակողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Կապալառուն Աշխատանքների /Աշխատանքների առանձին փուլերի/ կատարման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուներին է ներկայացնում կատարված Աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երեք օրինակ /N 3 հավելված/:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուներին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ լրացնելով միայն [illegible] սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված [illegible] www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուները պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուները չեն ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման [illegible] Պատվիրատուները ձեռնարկում են նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր վճարման ենթակա գումարը 23 չափաբաժնի համար կազմում է **30.963.660 (երեսուն միլիոն ինը հարյուր վաթսուներեք հազար վեց հարյուր վաթսուն)** ՀՀ դրամ այդ թվում համայնքի կողմից վճարման ենթակա 30 % մասնաբաժնի համար հասանելիք ԱԱՀ-ն **1.752.660 (մեկ միլիոն յոթ հարյուր հիսուներկու հազար վեց հարյուր վաթսուն)** ՀՀ դրամ:

- Պատվիրատու 1-ի վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է **10.515.960 (տասը միլիոն հինգ հարյուր տասնհինգ հազար ինը հարյուր վաթսուն)** ՀՀ դրամ, այդ թվում **1.752.660 (մեկ միլիոն յոթ հարյուր հիսուներկու հազար վեց հարյուր վաթսուն)** ՀՀ դրամ ԱԱՀ
- Պատվիրատու 2-ի վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է **20.447.700 (քսան միլիոն չորս հարյուր քառասունյոթ հազար յոթ հարյուր)** ՀՀ դրամ, **առանց ԱԱՀ :**

5.1.2 Համաձայն վճարման ժամանակացույցի(Հավելված 3) Կապալառուն կատարված աշխատանքների համար ներկայացնելու է 2 կարգի հաշիվ ապրանքագրեր `

- ✓ Պատվիրատու 1-ին՝ հարկային հաշիվ ներառյալ ԱԱՀ,
- ✓ Պատվիրատու 2-ին՝ հաշվարկային փաստաթուղթ առանց ԱԱՀ, որն ել իր հերթին պարտավորվում է ներկայացնել Կառավարության 26 փետրվարի 2004թ-ի 256-Ն Որոշման համաձայն ԱԱհՀ-ից ազատման վերաբերյալ տեղեկանք

Պատվիրատուները վճարումը կիրականացնեն Կապալառուի կողմից ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության և հաշիվ ապրանքագրի հիման վրա:

5.1.3 Վճարման ներկայացված յուրաքանչյուր հանձնման-ընդունման արձանագրություն հաշվարկվում է Աշխատանքների Ծավալի և Արժեքի տեղեկագրի հիման վրա, որը Կապալառուի կողմից ներկայացվում է սույն պայմանագրի պահանջների համաձայն: Աշխատանքների Ծավալի և Արժեքի տեղեկագիրը պետք է արտացոլի ողջ Պայմանագրի Արժեքի բաշխումը ըստ աշխատանքի առանձին փուլերի և ներկայացվի այն տեսքով և ժամկետներում, որոնք կերաշխավորեն դրա գործնական կիրառումը:

5.1.4 Պայմանագրի գնից՝ մինչև **2103192 (երկու միլիոն հարյուր երեք հազար հարյուր իննսուներկու)** ՀՀ դրամը, Պատվիրատու 1 փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 10 /տաս/ աշխատանքային օրվա ընթացքում, և **6134310 /վեց միլիոն հարյուր երեսունչորս հազար երեք հարյուր տաս** / ՀՀ դրամը, Պատվիրատու 2 փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 10 /տաս/ աշխատանքային օրվա ընթացքում:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրագուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4 (չորս) բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրագուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարեցվել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և հիմնավորված հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուն կարող է վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին

ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշկով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վազգեն Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272544017
ՀՎՀՀ 06954139

_____ Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2

«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ
ՀՀ ք. Երևան, Օգանովի 8/27
ՀՎՀՀ 01831308
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022400701006
Նախագահ՝ Մ. Այվազյան

_____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՏՐԱՆՍ ՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ Լոռու մարզ, գ. Նորաշեն,
« ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»
ՀՀ 220143330300000
ՀՎՀՀ 06953205

_____ Ն. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«26» օգոստոսի 2019թ. կնքված
N «ՀՀ ԼՍՏՀ ԳՀԱՇՁԲ 19/11»
ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*[351]

«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐՈՏՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ (ՋՐԵԼԱՏԵՂԻ, ԱՐՈՏ ՏԱՆՈՂ ԴԱՇՏԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ) ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Ծավալաթերթ-նախահաշիվները տես կից EXCEL ֆայլով

* Կապալառուն աշխատանքները կատարում է **Տաշիր համայնքում և բնակավայրերում**:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վազգեն Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272544017
ՀՎՀՀ 06954139

Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2
«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ
ՀՀ ք. Երևան, Օգանովի 8/27
ՀՎՀՀ 01831308
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 20500224007010 06
Նախագահ Մ. Այվազյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՏՐԱՆՍ ՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ Լոռու մարզ, գ. Նորաշեն,
« ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»
ՀՀ 220143330300000
ՀՎՀՀ 06953205

Ե. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

---

[35] *Ծավալաթերթ-նախահաշիվը հրապարակվում է ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքների:*

Հավելված թիվ 2
«26» օգոստոսի 2019թ. կնքված
N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-19/111»
ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐՈՏՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ (ՋՐԵԼԱՏԵՂԻ, ԱՐՈՏ ՏԱՆՈՂ ԴԱՇՏԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ) ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբ	Ավարտ
1)	Տաշիրի համայնքի «Ապկլի» արոտավայրի ճանապարհի վերանորոգում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019
2)	Բլագոդարնոյե բնակավայրի «Միխ. կաճ» արոտավայրի ճանապարհի վերանորոգում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019
3)	Դաշտադեմ բնակավայրի «Հովարդե» արոտավայրի ճանապարհի վերանորոգում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019
4)	Կաթնառատ բնակավայրի «Ներքի սար»արոտավայրի ճանապարհի վերանորոգում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019
5)	Մեղվահովիտ բնակավայրի «Զամչա» արոտավայրի ճանապարհի վերանորոգում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019
6)	Մեղվահովիտ բնակավայրի «Մաթոսողլի» արոտավայրի ճանապարհի վերանորոգում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019
7)	Մեղվահովիտ բնակավայրի «Մետվելա» արոտավայրի ճանապարհի վերանորոգում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019
8)	Տաշիրի համայնքի «Ապկլի» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019
9)	Տաշիրի համայնքի «Մեծավանի հարակից տարածք» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019
10)	Տաշիրի համայնքի «Միխայլովկայի դիմաց» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019
11)	Տաշիրի համայնքի «Փչոլնի» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019
12)	Բլագոդարնոյե բնակավայրի «Ավազի հանքի տարածք» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019
13)	Բլագոդարնոյե բնակավայրի «Կոմսոմոլ» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019
14)	Դաշտադեմ բնակավայրի «Մեղ Սահ» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019
15)	Կաթնառատ բնակավայրի «Ներքի սար» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019
16)	Կաթնառատ բնակավայրի «Սարվանչայ 1» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019
17)	Կաթնառատ բնակավայրի «Սև ջուր» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019
18)	Լեռնահովիտ բնակավայրի «Կալեր» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019
19)	Լեռնահովիտ բնակավայրի «Կոկոլի ձոր» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019

20)	Լեռնահովիտ բնակավայրի «Թովմասի աղբյուրի տարածք» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019
21)	Մեղովկա բնակավայրի «Կոմպլեկսի տարածք» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019
22)	Մեղվահովիտ բնակավայրի «Մետվելա» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019
23)	Մեղվահովիտ բնակավայրի «Մաթոսողլի» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	31.10.2019
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վազգեն Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272544017
ՀՎՀՀ 06954139

Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2
«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ
ՀՀ ք. Երևան, Օգանովի 8/27
ՀՎՀՀ 01831308
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022400701006
Նախագահ՝ Մ. Այվազյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՏՐԱՆՍ ՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ Լոռու մարզ, գ. Նորաշեն,
« ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»
ՀՀ 220143330300000
ՀՎՀՀ 06953205

Ե. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«26» օգոստոսի 2019թ. կնքված
N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-19/111»
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1)	45231177/13	Տաշիրի համայնքի «Ակլի» արոտավայրի ճանապարհի վերանորոգում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	266484	532968	666210	888280	888280	888280
2)	45231177/2	Բլագոդարնոյե բնակավայրի «Մեծ կամ» արոտավայրի ճանապարհի վերանորոգում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	198432	396864	496080	661440	661440	661440
3)	45231177/3	Դաշտադեմ բնակավայրի «Հովարդ» արոտավայրի ճանապարհի վերանորոգում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	203520	407040	508800	678400	678400	678400
4)	45231177/8	Կաթնառատ բնակավայրի «Սորբի սար»արոտավայրի ճանապարհի վերանորոգում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	454740	909480	1136850	1515800	1515800	1515800
5)	45231177/5	Մեղվահովիտ բնակավայրի «[illegible]» արոտավայրի ճանապարհի վերանորոգում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	449970	899940	1124925	1499900	1499900	1499900
6)	45231177/9	Մեղվահովիտ բնակավայրի «[illegible]» արոտավայրի ճանապարհի վերանորոգում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	267756	535512	669390	892520	892520	892520
7)	45231177/11	Մեղվահովիտ բնակավայրի «[illegible]» արոտավայրի ճանապարհի վերանորոգում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	294150	588300	735375	980500	980500	980500
8)	45241138/22	Տաշիրի համայնքի «[illegible]» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	541236	1082472	1353090	1804120	1804120	1804120
9)	45241138/17	Տաշիրի համայնքի «[illegible]» տարածք» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	542826	1085652	1357065	1809420	1809420	1809420
10)	45241138/31	Տաշիրի համայնքի «[illegible]» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	373968	747936	934920	1246560	1246560	1246560
11)	45241138/33	Տաշիրի համայնքի «[illegible]» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	379692	759384	949230	1265640	1265640	1265640
12)	45241138/18	Բլագոդարնոյե բնակավայրի [illegible]	... %	... %	... %	... %	... %	... %	... %	1087560	2175120	2718900	3625200	3625200	3625200

		տարածք» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում													
13)	45241138/30	Բլագոդարնոյե բնակավայրի «Կոմսոմոլ» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	677340	1354680	1693350	2257800	2257800	2257800
14)	45241138/11	Դաշտադեմ բնակավայրի «Մեղ Սահ» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	340260	680520	850650	1134200	1134200	1134200
15)	45241138/20	Կաթնառատ բնակավայրի «Ներքի սար» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	259170	518340	647925	863900	863900	863900
16)	45241138/26	Կաթնառատ բնակավայրի «Սարվանչայ 1» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	267756	535512	669390	892520	892520	892520
17)	45241138/13	Կաթնառատ բնակավայրի «Սև ջուր» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	297648	595296	744120	992160	992160	992160
18)	45241138/1	Լեռնահովիտ բնակավայրի «Կալեր» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	334536	669072	836340	1115120	1115120	1115120
19)	45241138/2	Լեռնահովիտ բնակավայրի «Կոկոլի ծոր» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	291288	582576	728220	970960	970960	970960
20)	45241138/3	Լեռնահովիտ բնակավայրի «Թովմասի աղբյուրի տարածք» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	381600	763200	954000	1272000	1272000	1272000
21)	45241138/4	Մեղովկա բնակավայրի «Կոմալեկսի տարածք» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	389550	779100	973875	1298500	1298500	1298500
22)	45241138/5	Մեղվահովիտ բնակավայրի «Մետվելա» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	617556	1235112	1543890	2058520	2058520	2058520
23)	45241138/6	Մեղվահովիտ բնակավայրի «Մաթոսողլի» արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	372060	744120	930150	1240200	1240200	1240200

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վազգեն Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272544017
ՀՎՀՀ 06954139

Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2
«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ
ՀՀ ք. Երևան, Օգանովի 8/27
ՀՎՀՀ 01831308
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022400701006
Նախագահ՝ Մ. Այվազյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՏՐԱՆՍ ՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ Լոռու մարզ, գ. Նորաշեն,
« ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»
ՀՀ 220143330300000
ՀՎՀՀ 06953205

Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.